

իշխան Անտիոքայ: Յեղակարծուց խուճապեցաւ Լեւոն, մինչ վստահ ՚ի խոստմունս եւ յերդումն Բրնձին Անտիոքացոց՝ կայր պարապեալ ՚ի յանձանձանս նորոյ թագաւորութեանն. սակայն ոչ յապաղեաց զօր գումարել՝ ըստ ժամուն ներելոյ, եւ դիմել խափուցանել զիրդեհ ապստամբութեանն մինչ չեւ ճարակեալ: Աստանօր խորագէտ խորագիտի պատահեալ եւ յամառ ընդ յամառի, յերկոցունց կողմանց յերկարէր հակառակութիւնն. քանզի գիտելով ինքնակոչ Բրնձին՝ եթէ ոչ կարէ իւրայովքն միայն զդէմ ունել հօգորագունին, ճարտարութեամբ խոստմանց եւ ողորով՝ յանկոյց յինքն զերկոսին կարգս քաջամարտիկ Ասպետացն, զՀիւանդանոցին եւ զՏաճարին. զի սոքա յետինքս վաղագոյն իսկ գծովեալ էին ընդ Լեւոնի, վասն գրաւելոյ եւ չտալոյ նոցա զԿասդիմն բերդ՝ զնուաճեալն եւ զլքեալ ՚ի Սալահէտտինէ. այսպիսի իմն պատճառս տօգոհութեան թուի եւ միւսոցն ունել. վասն այնորիկ միաբանեցան ընդ հայրանենգ կոմսին: Զգաց դժուարութեանն, այլ ոչ թուլացաւ Լեւոն, եւ փութացաւ զալ պաշարել եւ նեղել զԱնտիոք, մանաւանդ զի հաւատայր եթէ ոչ ամենայն Անտիոք հաւանեալ իցէ տէրութեան Տրիպօլսեցոյն, այլ պատկառ կայցեն ողջախոհքն՝ երդմանցն եւ իրաւանց: Երկմտեալ թերեւս եւ ինքն զրկողն ընդ իւրսն, եւ ոչ բաւականս վարկուցեալ զԱսպետսն ՚ի վանել զթագաւորն, աջողագոյն եւս խորագիտութեամբ՝ զրգոեաց յարոյց ընդդէմ նորա՝ մերձաւոր եւ ահաւոր թշնամի, զսուլտանն Իկոնիոնի՝ Գլրճ-Արսլան Բ Քէլիխսրու. իսկ Լեւոն ընդ խորագիտութեան եւ զքաջութիւն իւր հանդիսացոյց, միայնակ ՚ի միջի չորից զօրութեանց ժուժկալելով, թերեւս եւ հնգից. քանզի եւ զսուլտանն Հալպայ զիւր դրացի՝ դրդեալ ասի Պեմունդի՝ ձեռն տալ դէնակցին իւրում Իկոնիացոյ՝ ընդդէմ Լեւոնի. իսկ սա ՚ի ձեռն լրտեսաց իւրոց դարանակալաց՝ կալեալ զպատգամաւորս կոմսին՝ եւ ահաբեկ արարեալ, ետ խոստովանել զամենայն ստուգութեամբ. եւ նախ ընդ հօգորագունին դիմամարտել պատշաճ համարեցաւ. դարձոյց զթիկունս յԱնտիոքայ, խաղաց արագ արագ ՚ի վերայ իւրանման Առիւծ (այլ եւ Սուր) անուանելոյն. եւ յետս ընկրկեաց յիւրոց սահմանաց. դաշամբք՝ կամ դիմակաց գնդիւք՝ խափանեալ զարշաւանս նորին: Յետ այնր՝ սարտոյց թափեաց ՚ի կոմսէն զԱսպետսն, եւ նոցին օգնականութեամբ յաղթեալ դիմակայիցն, հալածեաց զանիրաւեալն ՚ի հայր իւր եւ ՚ի թոռնեայն՝ յօրինաւոր տեարսն Անտիոքայ, եւ վերստին հաստատեաց զԲրնձն ծեր ՚ի